

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

2 դեկտեմբերի 2008թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԿԱՆՈՆՆԵՐ**

ԲԱԺԻՆ 1. Ընդհանուր դրույթներ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

- 1) «Հայաստանի Ֆոնդային Բորսա» Բաց Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Բորսա) «Սակագների մասին կանոնները» մշակված են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Բորսայի կանոնների համաձայն:
- 2) Սույն կանոնները սահմանում են Բորսայի կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների չափերը:
- 3) Բորսային վճարվող միջնորդավճարները և այլ վճարները պետք է կատարվեն սույն կանոններով նախատեսված ժամկետներում: Այն դեպքում, երբ նման ժամկետ սահմանված չէ, վճարումը պետք է իրականացվի Բորսայի կողմից տրված հաշիվ-ապրանքագրով նախատեսված ժամկետում:
- 4) Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում Բորսան իրավունք ունի պահանջել, իսկ սույն կանոնների համաձայն վճարողը (պարտապանը) պարտավոր է վճարել տուգանք՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.5%-ի չափով:

Գլուխ 2. Կանոններում օգտագործվող հիմնական հասկացությունները

- 1) Սույն կանոններում օգտագործված հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) **«Ճողոր գործարք».** Բորսայում կնքված առուվաճառքի գործարք, որի առարկա հանդիսացող բաժնային արժեթղթերը կազմում են թողարկողի տվյալ դասի թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնային արժեթղթերի 20 (քսան) և ավելի տոկոսը:
- 3) **«Գործարքի գումար».** Բորսայում կնքված գործարքի արդյունքում ձեռք բերված ֆինանսական գործիքի դիմաց գնորդի կողմից վաճառողին վճարման ենթակա գումար (գործարքի առարկա ֆինանսական գործիքի մեկ լոտի գնի և լոտերի քանակի արտադրյալը):
- 4) **«Կորպորատիվ պարտատոմսեր».** իրավաբանական անձի կողմից թողարկված և սույն կանոնների իմաստով պետական պարտատոմսեր չհամարվող պարտատոմսեր:
- 5) **«Պետական պարտատոմսեր».** Հայաստանի Հանրապետության կամ համայնքների կողմից օրենքով սահմանված կարգով թողարկված պարտատոմսեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսեր:
- 6) **«Թողարկման ծավալ».** հաշվարկվում է թողարկվող բաժնետոմսերի քանակը բազմապատկելով դրանց տեղաբաշխման գնով: Եթե բաժնետոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գնով, ապա թողարկման ծավալը հաշվարկվում է թողարկվող բաժնետոմսերի քանակը բազմապատկելով դրանց անվանական արժեքով:
- 7) **«Բաժնետոմսերի շուկայական արժեք».** հաշվարկվում է բաժնետոմսերի քանակը բազմապատկելով դրանց շուկայական արժեքով: Սույն կետի իմաստով որպես բաժնետոմսի շուկայական արժեք է ընդունվում Բորսայում նախորդ եռամսյակի առևտրային բոլոր օրերի համար այդ բաժնետոմսերի փակման գների միջին թվաբանականը՝ կշռված բաժնետոմսերի քանակով, իսկ եթե նախորդ եռամսյակում գործարք չի կնքվել, ապա այդ բաժնետոմսերով Բորսայում կնքված վերջին գործարքի գինը: : Եթե նման հաշվարկի կատարումն անհնար է, ապա շուկայական արժեքը հաշվարկվում է Թողարկողի՝ անկախ աուդիտորի կողմից հաստատված վերջին ֆինանսական հաշվետվություններում նշված՝ Թողարկողի սեփական կապիտալի մեծության հիման վրա:
(7-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 20.03.2009թ.)
- 8) *(8-րդ կետը ուժը կորցրած է ճանաչվել 20.03.2009թ. ՀՀ կենտրոնական բանկում գրանցմամբ)*
- 9) **«Պարտատոմսերի անվանական ծավալ».** շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի քանակի և անվանական արժեքի արտադրյալը:
- 10) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:

ԲԱԺԻՆ 2. Արժեթղթերի ցուցակման սակագներ

Գլուխ 3. Արժեթղթերի ցուցակման գործընթացի վճար

- 1) Սույն գլխի դրույթները չեն տարածվում պարտատոմսերի ցուցակման կամ դրանց բորսայական առևտրին թույլատրման վրա:
- 2) Նախքան բաժնետոմսերի ցուցակման կամ դրանց բորսայական առևտրի թույլատրման գործընթացը սկսելը՝ թողարկողը Բորսային վճարում է ցուցակման հայտը ներկայացնելու վճար, որը կազմում է 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետով նախատեսված գումարը հետագայում հաշվանցվում է ցուցակման վճարի գումարից:
- 3) Եթե թողարկողի արժեթղթերը բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակից տեղափոխվում են բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակ, ապա թողարկողը բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակի համար սահմանված ցուցակման վճարը չի վճարում: Եթե Թողարկողի դիմումի համաձայն նրա արժեթղթերը բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակից տեղափոխվում են բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակ, ապա Թողարկողը վճարում է բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակի համար սահմանված ցուցակման վճարի 50%-ը: Եթե Թողարկողի արժեթղթերի տեղափոխումը բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակից բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակ իրականացվում է Բորսայի նախաձեռնությամբ, ապա Թողարկողը որևէ լրացուցիչ վճարում չի կատարում:
- 4) Եթե Ազատ շուկայում առևտրին թույլատրված Թողարկողի արժեթղթերը ցուցակվում են բաժնետոմսերի հիմնական (A) կամ երկրորդային (B) ցուցակում, ապա այն դեպքում, երբ Ազատ շուկայում դրանց առևտուրը թույլատրելու օրվանից անցել է նվազագույնը 12 ամիս, Թողարկողը վճարում է, համապատասխանաբար, բաժնետոմսերի հիմնական (A) կամ երկրորդային (B) ցուցակում ցուցակման համար նախատեսված վճարի 50%-ը:

Գլուխ 4. Բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ցուցակման վճար

- 1) Բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում բաժնետոմսերը ցուցակելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող ցուցակման վճար՝ 800,000 (ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակվող բաժնետոմսերի շուկայական արժեքի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված ցուցակման վճարի չափը չի կարող գերազանցել 3,000,000 (երեք միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 2) Բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում արդեն իսկ ցուցակված բաժնետոմսերի նոր թողարկումների համար ցուցակման վճարը կազմում է 400,000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած թողարկման ծավալի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված ցուցակման վճարի չափը չի կարող գերազանցել 1,000,000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 3) Թողարկողի աշխատակիցների համար կազմակերպվող բաժնետոմսերի փակ տեղաբաշխման դեպքում բաժնետոմսերի նոր թողարկումների համար ցուցակման վճար չի գանձվում:

Գլուխ 5. Բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում ցուցակման վճար

- 1) Բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում բաժնետոմսերը ցուցակելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող ցուցակման վճար՝ 400,000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակվող բաժնետոմսերի շուկայական արժեքի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված ցուցակման վճարի չափը չի կարող գերազանցել 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 2) Բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում արդեն իսկ ցուցակված բաժնետոմսերի նոր թողարկումների համար ցուցակման վճարը կազմում է 200,000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած թողարկման ծավալի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված ցուցակման վճարի չափը չի կարող

գերազանցել 1,000,000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:

- 3) Թողարկողի աշխատակիցների համար կազմակերպվող բաժնետոմսերի փակ տեղաբաշխման դեպքում բաժնետոմսերի նոր թողարկումների համար ցուցակման վճար չի գանձվում:

Գլուխ 6. Ազատ շուկայում առևտրին բաժնետոմսերի թույլատրման վճար

- 1) Ազատ շուկայում բաժնետոմսերն ընդգրկելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող վճար՝ 50,000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած բորսայական առևտրին թույլատրվող բաժնետոմսերի շուկայական արժեքի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված վճարի չափը չի կարող գերազանցել 100,000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 2) Ազատ շուկայում արդեն իսկ ընդգրկված բաժնետոմսերի նոր թողարկումների համար սահմանված վճարը կազմում է 25,000 (քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած թողարկման ծավալի 0.02%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված վճարի չափը չի կարող գերազանցել 100,000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 3) Թողարկողի աշխատակիցների համար կազմակերպվող բաժնետոմսերի փակ տեղաբաշխման դեպքում բաժնետոմսերի նոր թողարկումների համար ցուցակման վճար չի գանձվում:

Գլուխ 7. Պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ցուցակման վճար

- 1) Պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում պարտատոմսերը ցուցակելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող ցուցակման վճար՝ 300,000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 2) Եթե պարտատոմսեր Թողարկողի բաժնետոմսերն արդեն իսկ շրջանառում են Բորսայի հիմնական (A), երկրորդային (B), կամ ազատ (C) ցուցակում, կամ եթե Թողարկողը Բորսայի անդամ է, ապա Թողարկողը վճարում է սույն գլխի 1) կետով նախատեսված վճարի 50%-ը:

Գլուխ 8. Պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ցուցակման վճար

- 1) Պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում պարտատոմսերը ցուցակելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող ցուցակման վճար՝ 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 2) Եթե պարտատոմսեր Թողարկողի բաժնետոմսերն արդեն իսկ շրջանառում են Բորսայի հիմնական (A), երկրորդային (B), կամ ազատ (C) ցուցակում, կամ եթե Թողարկողը Բորսայի անդամ է, ապա Թողարկողը վճարում է սույն գլխի 1) կետով նախատեսված վճարի 50%-ը:

Գլուխ 9. Ազատ շուկայում առևտրին պարտատոմսերի թույլատրման վճար

- 1) Ազատ շուկայում պարտատոմսերն ընդգրկելու համար Թողարկողը վճարում է միանվագ չփոխհատուցվող վճար՝ 50,000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 2) Եթե պարտատոմսեր Թողարկողի բաժնետոմսերն արդեն իսկ շրջանառում են Բորսայի հիմնական (A) կամ երկրորդային (B) ցուցակում կամ թույլատրված են առևտրին ազատ շուկայում, կամ եթե Թողարկողը Բորսայի անդամ է, ապա Թողարկողը վճարում է սույն գլխի 1) կետով նախատեսված վճարի 50%-ը:

Գլուխ 10. Արժեթղթերի ցուցակման պահպանման սակագներ

- 1) Բորսայում ցուցակված կամ բորսայական առևտրին թույլատրված արժեթղթերի թողարկողներից գանձվում են տարեկան վճարներ (այսուհետ՝ ցուցակման պահպանման վճար):
- 2) Տարեկան վճարները գանձվում են եռամսյակային կտրվածքով՝ իբրև կանխավճար յուրաքանչյուր եռամսյակի սկզբին:

- 3) Յուրաքանչյուր եռամսյակի սկզբին նախորդ եռամսյակի տվյալների հիման վրա Բորսան հաշվարկում է ընթացիկ եռամսյակի համար թողարկողից գանձվող վճարը, որը թողարկողի կողմից ենթակա է վճարման Բորսայից համապատասխան ծանուցումը ստանալու պահից տասնօրյա ժամկետում:
- 4) Եթե եռամսյակի ընթացքում սկսվում է արժեթղթերի ապացուցական կամ Բորսայում դրանց առևտրի դադարեցման գործընթաց, ապա վճարը հաշվարկվում է այն ամիսների համար, որոնց ընթացքում արժեթղթերը Բորսայում ցուցակված կամ բորսայական առևտրին թույլատրված են եղել: Այս դեպքում եռամսյակի համար վճարվելիք գումարը բաժանվում է երեքի և բազմապատկվում է նշված ամիսների թվով: Սույն կետի իմաստով ոչ լրիվ ամիսն ընդունվում է լրիվ ամսվան հավասար:
- 5) Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում Բորսայի կանոններով սահմանված կարգով թողարկողի որևէ դասի բաժնային արժեթղթերի ցուցակման պահպանման համար թողարկողը Բորսային վճարում է եռամսյակային վճար՝ 450,000 (չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի 0.0075%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Եթե թողարկողի բաժնետոմսերի շուկայական արժեքը գերազանցում է երկու միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը, ապա եռամսյակային վճարի չափը սահմանվում է 600,000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի նշված սահմանը գերազանցող գումարի 0.0035%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 6) Բորսայի բաժնետոմսերի երկրորդային (B) ցուցակում Բորսայի կանոններով սահմանված կարգով թողարկողի որևէ դասի բաժնային արժեթղթերի ցուցակման պահպանման համար թողարկողը Բորսային վճարում է եռամսյակային վճար՝ 300,000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի 0.0075%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Եթե թողարկողի բաժնետոմսերի շուկայական արժեքը գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը, ապա եռամսյակային վճարի չափը սահմանվում է 375,000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի նշված սահմանը գերազանցող գումարի 0.0035%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 7) Ազատ շուկայում ընդգրկված թողարկողի որևէ դասի բաժնային արժեթղթերի համար թողարկողը Բորսային վճարում է եռամսյակային վճար՝ 45,000 (քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի 0.0075%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Եթե թողարկողի բաժնետոմսերի շուկայական արժեքը գերազանցում է վեց հարյուր միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը, ապա եռամսյակային վճարի չափը սահմանվում է 90,000 (իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած ցուցակված բաժնետոմսերի շուկայական արժեքի նշված սահմանը գերազանցող գումարի 0.0035%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված եռամսյակային վճարի չափը չի կարող գերազանցել 450,000 (չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
(7-րդ կետ կետի լրացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 20.03.2009թ.)
- 8) Բորսայի պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում Բորսայի կանոններով սահմանված կարգով թողարկողի որևէ դասի պարտատոմսի ցուցակման պահպանման համար թողարկողը Բորսային վճարում է եռամսյակային վճար՝ 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող անվանական ծավալի 0.0025%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված եռամսյակային վճարի չափը չի կարող գերազանցել 225,000 (երկու հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 9) Բորսայի պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում Բորսայի կանոններով սահմանված կարգով թողարկողի որևէ դասի պարտատոմսի ցուցակման պահպանման համար թողարկողը Բորսային վճարում է եռամսյակային վճար՝ 75,000 (յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող անվանական ծավալի 0.0025%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Սույն կետում նշված եռամսյակային վճարի չափը չի կարող գերազանցել 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:

- 10) Ազատ շուկայում ընդգրկված թողարկողի որևէ դասի պարտատոմսի համար թողարկողը Բորսային վճարում է եռամսյակային վճար՝ 45,000 (քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարած պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող անվանական ծավալի 0.0025%-ը՝ առանց ավելացված արժեքի հարկի: Մույն կետում նշված եռամսյակային վճարի չափը չի կարող գերազանցել 90,000 (իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 11) Եթե պարտատոմսեր թողարկողի բաժնետոմսերն արդեն իսկ շրջանառում են Բորսայի հիմնական (A) կամ երկրորդային (B) ցուցակում կամ թույլատրված են առևտրին ազատ շուկայում, կամ եթե Թողարկողը Բորսայի անդամ է, ապա թողարկողը վճարում է սույն գլխի 8), 9) կամ 10) կետով նախատեսված վճարի 50%-ը:

ԲԱԺԻՆ 3. Անդամավճարներ և շուկային մասնակցության վճարներ

Գլուխ 11. Անդամավճարներ

- 1) Բորսայի անդամների կողմից վճարվող անդամավճարի (այսուհետ՝ Անդամավճար) չափը կազմում է 300,000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ յուրաքանչյուր կիսամյակի համար՝ առանց ավելացված արժեքի հարկի: Անդամավճարը ենթակա է վճարման Բորսայի անդամի կարգավիճակի շնորհման պահից՝ ընթացիկ կիսամյակի համար, այնուհետև գանձվում է կանխավճարի տեսքով՝ հաջորդ կիսամյակի համար:
- 2) Եթե Բորսայի անդամի կարգավիճակը շնորհվում է օրացույցային կիսամյակի ընթացքում, ապա Անդամավճարը հաշվարկվում է ամսական կտրվածքով և անդամակցության առաջին ամիսը հաշվարկվում է որպես լրիվ ամիս:
- 3) Անդամակցության դադարեցումը, այդ թվում Բորսայի անդամի ցանկությանը, ինչպես նաև անդամության կամ առևտրի իրավունքի կասեցումը չի կարող հիմք հանդիսանալ վճարված Անդամավճարը հետ պահանջելու համար:

Գլուխ 12. Շուկային մասնակցության վճարներ

- 1) Շուկայի մասնակիցների կողմից Բորսայի յուրաքանչյուր հարթակում առևտրին մասնակցելու համար կատարվող մասնակցության վճարի (այսուհետ՝ Մասնակցության վճար) չափը կազմում է 180,000 (մեկ հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ յուրաքանչյուր կիսամյակի համար՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 2) Եթե Շուկայի մասնակցի կարգավիճակը շնորհվում է օրացույցային կիսամյակի ընթացքում, ապա Մասնակցության վճարը հաշվարկվում է ամսական կտրվածքով և տվյալ շուկային մասնակցության առաջին ամիսը հաշվարկվում է որպես լրիվ ամիս:
- 3) Շուկայի մասնակցի կարգավիճակի դադարեցումը, այդ թվում Շուկայի մասնակցի ցանկությանը, ինչպես նաև Շուկայի մասնակցի կարգավիճակի կամ առևտրի իրավունքի կասեցումը չի կարող հիմք հանդիսանալ վճարված Մասնակցության վճարը հետ պահանջելու համար:

ԲԱԺԻՆ 4. Բորսայական միջնորդավճարներ

Գլուխ 13. Բորսայում կնքված գործարքից միջնորդավճար

- 1) Բորսայի՝ բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում ցուցակված բաժնային արժեթղթերով Բորսայում անընդհատ երկկողմանի աճուրդի ընթացքում կնքված առուվաճառքի գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է բորսայական միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.1%-ի (գրո ամբողջ մեկ տասնորդական տոկոս) չափով: Եթե գործարքի կողմը տվյալ գործարքի առարկա արժեթղթերի շուկա ստեղծողն է, ապա նրանից գանձվող բորսայական միջնորդավճարը կազմում է տվյալ գործարքի գումարի 0.05%-ը (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսը): Հասցեական առևտրի ընթացքում կնքված առուվաճառքի գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է բորսայական միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.2%-ի (գրո ամբողջ երկու տասնորդական տոկոս) չափով:
(1-ին կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 20.03.2009թ.)

տոկոս) չափով: Եթե գործարքի կողմը գործարքի առարկա՝ տվյալ տրանշի (թողարկման) պետական պարտատոմսերի Գնանշողի կարգավիճակ ունեցող Գործակալն է, ապա նրանից գանձվող բորսայական միջնորդավճարը կազմում է տվյալ գործարքի գումարի 0.003%-ը (գրո սմբողջ երեք հազարերորդական տոկոսը): Հասցեական առևտրի ընթացքում կնքված առուվաճառքի գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է բորսայական միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.01%-ի (գրո սմբողջ մեկ հարյուրերորդական տոկոս) չափով:

- 9) Բորսայում կնքված ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է բորսայական միջնորդավճար՝ ռեպո-ուղղակի գործարքի գումարի 0.26%*T/365 չափով (որտեղ T-ն ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների միջև օրացուցային օրերի քանակն է), բայց ոչ ավել, քան ռեպո-ուղղակի գործարքի գումարի 0.005%-ը: Ռեպո-հետադարձ գործարքի համար գործարքի կողմերից բորսայական միջնորդավճար չի գանձվում:

(9-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 20.03.2009թ.)

- 10) Բորսայում բաժնային արժեթղթերով կնքված խոշոր գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է բորսայական միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.1%-ի (գրո սմբողջ մեկ տասներորդական տոկոս) չափով:

Գլուխ 14. Տեղաբաշխման գործարքից միջնորդավճար

- 1) Բորսայում բաժնային արժեթղթերի տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքի՝ արժեթղթեր ձեռքբերած կողմից գանձվում է բորսայական միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.1%-ի (գրո սմբողջ մեկ տասներորդական տոկոս) չափով:
- 2) Բորսայում կորպորատիվ պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքի՝ պարտատոմսեր ձեռքբերած կողմից գանձվում է բորսայական միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.005%-ի (գրո սմբողջ հինգ հազարերորդական տոկոս) չափով:
- 3) Բորսայում պետական պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում կնքված գործարքի՝ պարտատոմսեր ձեռքբերած կողմից գանձվում է բորսայական միջնորդավճար՝ տվյալ գործարքի գումարի 0.005%-ի (գրո սմբողջ հինգ հազարերորդական տոկոս) չափով:

Գլուխ 15. Բորսայական միջնորդավճարների հաշվարկման կարգը

- 1) Սույն բաժնին համապատասխան հաշվարկված բորսայական միջնորդավճարների գումարները կլորացվում են Հայաստանի Հանրապետության մեկ դրամի ճշտությամբ, բայց ոչ պակաս 10 (տաս) դրամից:

ԲԱԺԻՆ 5. Բորսայական վճարներ

Գլուխ 16. Բորսայի առևտրային համակարգին միանալու համար վճարներ

- 1) Բորսայի առևտրային համակարգին Բորսայի տարածքից դուրս գտնվող տերմինալների (հեռացված տերմինալների) միջոցով միանալու հնարավորություն տվող ծրագրային մոդուլի տեղադրման համար գանձվող գումարը յուրաքանչյուր տերմինալի համար կազմում է 5,000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 2) Բորսայի առևտրային համակարգին բորսայական առևտրին մասնակցելու իրավունքով առաջին հեռացված տերմինալի շահագործման համար անհրաժեշտ ծրագրային մոդուլը Բորսայի անդամին կամ Շուկայի մասնակցին օգտագործման տրամադրվում է անվճար:
- 3) Բորսայի առևտրային համակարգին բորսայական առևտրին մասնակցելու իրավունքով մեկից ավելի հեռացված տերմինալների միացման դեպքում երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ տերմինալից գանձվող վճարը կազմում է ամսական 10,000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 4) Բորսական առևտրին իրական ժամանակի ռեժիմում դիտորդի կարգավիճակով հետևելու հնարավորությամբ Բորսայի առևտրային համակարգին հեռացված տերմինալների միջոցով միանալու համար յուրաքանչյուր տերմինալից գանձվող վճարը կազմում է ամսական 20,000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի: Բորսայի անդամից կամ Շուկայի մասնակցից սույն կետին համապատասխան գանձվող վճարը

կազմում է ամսական 10,000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:

- 5) ՀՀ Ֆինանսների նախարարությունը (պետական պարտատոմսերի բորսայական առևտրի մասով) և ՀՀ Կենտրոնական բանկը դիտորդի կարգավիճակով Բորսայի առևտրային համակարգին միանալու և իրական ժամանակի ռեժիմում բորսայական առևտրի ընթացքին դիտորդի կարգավիճակով հետևելու հնարավորություն ստանում են անվճար:

Գլուխ 17. Բորսայական տեղեկատվության տարածման համար վճարներ

- 1) Բորսայական տեղեկատվության տարածման համար գանձվող գումարը յուրաքանչյուր տեղեկատվական կամ նմանատիպ գործառնություններ իրականացնող այլ կազմակերպությունից (այսուհետ՝ Տարածող) կազմում է ամսական ոչ պակաս, քան 20,000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
- 2) Նույն ծավալով, որակով, ձևով և պարբերականությամբ բացահայտվող տեղեկատվության տարածման համար Բորսայի կողմից գանձվող գումարը պետք է լինի նույնը բոլոր Տարածողների համար:
- 3) Տարածվող տեղեկատվության ծավալը, ձևը, պարբերականությունը և բացահայտվող տեղեկատվության տարածման համար Բորսայի կողմից գանձվող գումարի չափը սահմանվում է Տարածողի հետ կնքվող պայմանագրով:
- 4) Սույն գլխին համապատասխան տարածվող տեղեկատվությունը չի կարող ներառել բանկային կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ:
- 5) Բորսան կարող է սույն գլխի 1) - 2) կետերի պահանջներից բացառություն սահմանել առանձին Տարածողների և/կամ տեղեկատվության համար՝ հաշվի առնելով տվյալ Տարածողի դերը և տարածվող առանձին տեղեկությունների կարևորությունը:

ԲԱԺԻՆ 6. Անցումային դրույթներ

Գլուխ 18. Այլ դրույթներ

- 1) Սույն կանոններն ուժի մեջ են մտնում ՀՀ Կենտրոնական բանկում գրանցման պահից:
- 2) Սույն կանոններն ուժի մեջ մտնելու պահին Բորսայում առևտրին թույլատրված արժեթղթերի համար սույն կանոններով սահմանված՝ ցուցակման պահպանման վճարներն ուժի մեջ են մտնում 2009 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ ցուցակման պահպանման վճարները հաշվարկվում են ՀՀ արժեթղթերի հանձնաժողովում 2005 թվականի դեկտեմբերի 2-ին նոր խմբագրությամբ գրանցված՝ Հայաստանի Ֆոնդային Բորսայի «Սակագների մասին կանոններին» համապատասխան:
- 3) Սույն կանոններն ուժի մեջ մտնելու պահին Բորսայի անդամ կամ Շուկայի մասնակից հանդիսացող կազմակերպությունների համար սույն կանոններով սահմանված անդամավճարները և շուկային մասնակցության վճարներն ուժի մեջ են մտնում Բորսայի «Անդամակցության և շուկային մասնակցության» կանոններին համապատասխան վերջիններիս՝ որպես Բորսայի անդամ կամ Շուկայի մասնակից վերագրանցվելու պահից:
- 4) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:

**Հաստատված է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ**

Յոհան Ֆրեդիով

**«13» հունիսի 2008թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/101Լ**